

ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՒ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ**

Գարեգին Սրվանձտյանցի ծննդյան 175-ամյակի առթիվ

Այս օրը, դարի առաջին կեսից՝ երոպական մի շարք ժողովուրդների օրինակով հայ իրականության մեջ եւս ազգային արժեքների, մասնավորապես ժողովրդական դիցաբանության եւ բառ ու բանի հանդեպ առանձնակի հետաքրքրություն է դրսևորվում: Դարերի թոհուրովով անցած բանավոր ու գրավոր մշակութային ժառանգության նորովի արժեւորումը եւ բազմաբնույթ հավաքչական աշխատանքների արդյունքում ասպարեզ հանված նյութերն ու դրանց վերաբերյալ գիտական ուսումնասիրություններն անմիջապես արտացոլվում են նորաստեղծ պարբերականներում, տարատեսակ հանդեսներում եւ ժողովածուներում: Հայոց բառ ու բանի, ազգագրական եւ բանահյուսական նորանոր նյութերի հայտնաբերման, գրառման եւ զանազան հրատարակություններով դրանք կրկին ժողովրդին վերադարձնելու գործընթացը մեր ազգային զարթոնքի եւ ինքնության վերահաստատումն էր նախանշում:

Պատմական հայրենիքում եւ նրանից դուրս գտնվող հայաշատ վայրերում այդ գործին լծվեցին թե՛ երոպական կրթություն ստացած մեր ազգային զարթոնքի նվիրյալները (Խաչատուր Աբովյան, Մեսրոպ Թադևոսյան, Միքայել Նալբանդյան, Ստեփանոս Նազարյանց, Երվանդ Լալայան եւ այլք), թե՛ Հայ Առաքելական եկեղեցու գործիչները (Խրիմյան Հայրիկ, Գարեգին Սրվանձտյանց, Գաբրիել Այվազյան, Գարեգին Հովսեփյան, Գաբրիել Պատկանյան եւ այլք):

Շուրջ երեք դար առաջ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում իրենց անմնացորդ նվիրվածությամբ հայկական մշակութային կյանքի վերածնունդն ազդարարեցին Մխիթար Սեբաստացին ու նրա աշակերտները: Նրանց սկսած ազգանպաստ գործունեությունը աստվածաբանության, հրատարակչության, բառարանագրության, պատմագրու-

թյան, ազգագրության, հնագիտության, լեզվաբանության, գրականության եւ այլ ասպարեզներում պատվով շարունակեցին Մխիթարյան միաբանության բազում նվիրյալներ:

Առաջին աշխարհամարտը եւ Մեծ եղեռնը Հայոց աշխարհում խաթարեցին այդ գործընթացի շարունակականությունը. հայաթափվեցին ողջ Արեւմտյան Հայաստանն ու նրան հարակից հայաշատ վայրերը. 1.5 միլիոն հայ գոհ գնաց թուրքական յաթաղանին, իսկ շուրջ կես միլիոնը դարձավ գաղթական՝ աշխարհի չորս ծագերում ստեղծելով կամ սովորաբար սփյուռքահայ գաղթօջախները: Բնավեր դարձած ժողովրդի մի մասը հանգրվանեց Արեւելյան Հայաստանում, մի մասն էլ ցրվեց աշխարհով մեկ: Անպաշտպան թողած մեր նյութական մշակույթը մնաց ցեղասպանի երախտում (սուրբ նշխար՝ շան բերանում), իսկ տարագիր դարձած բնակչության հետ փրկված նրա հոգեւոր մշակութային ժառանգությունը դեռ պետք է շարունակել ապրել վերապրողների ու նրանց սերունդների հիշողության մեջ՝ իբրեւ գոյատեւման, վրեժի ու պահանջատիրության կոչ:

Փառք ու պատիվ բոլոր այն հայորդիներին, որոնք թե՛ մինչեւ եղեռնը, թե՛ հետեղեռնյան տարիներին կարողացան գրի առնել եւ ժամանակի ամենակույ երախից փրկել մեր հոգեւոր մշակույթի անգնահատելի գանձերը:

Այս տարի, երբ լրանում է բանասեր-բանահավաք, ազգագրագետ, կրթական, կրոնական ու հասարակական գործիչ Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանցի ծննդյան 175-ամյակը, հարկ ենք համարում մեկ անգամ եւս հակիրճ արժեւորել մեր ժողովրդագիտության մեծ երախտավորի վաստակը՝ կանգ առնելով նաեւ առ այսօր ուշադրությունից դուրս մնացած բնագավառներից մեկին՝ նրա կողմից հայ ժողովրդական երգիծական մանրապատումների հավաքման աշխատանքներին ու բանահյուսության այդ տեսակի վերաբերյալ սրվանձտյանական մեկնաբանություններին:

Գարեգին Սրվանձտյանցը եղավ այն նվիրյալ հայորդին, որն իր ողջ գիտակցական կյանքը (նա ապրեց ընդամենը 52 տարի) նվիրաբերեց հայ ժողովրդին եւ նրա ազգային ինքնագիտակցության արթնացմանը, դարերի խորքից եկող հոգեւոր արժեքների բացահայտմանն ու հրատարակությանը:

Կրթական եւ եկեղեցական աշխատանքների բերումով լինելով բազմաթիվ հայաբնակ վայրերում՝ նա գրառեց իրեն հանդիպած բազմադարյա մեր հոգեւոր մշակութային ժառանգության բոլոր դրսեւո-

րումները՝ ազգագրական, բանահյուսական, ժողովրդագրական եւ այլ-եւայլ նյութերը հրատարակելով «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874թ.), «Հնոց եւ նորոց» (1874 թ.), «Մանանա» (1876 թ.), «Թորոս աղբար», մասն Ա. (1878 թ.), մասն Բ. (1884 թ.), «Համով-հոտով» (1884 թ.) ժողովածուներում:

«Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» ժողովածուի առաջաբանում Գարեգին Սրվանձտյանցը պատկերավոր այսպես է բնութագրել իր հավաքչական գործունեությունը. «Ես իբրեւ մեղու ապրած ու աշխատած եմ. զիս փերակի մեջ կը պահեին եւ դրսեն դուռը կը ծեփեին. իմ օրերու մեծ մասը անլուսատես եւ փականքի տակ անցուցեր եմ. բայց երբ բաց գտեր եմ դուռը, փութացեր եմ ծաղիկներուն վազել. մասիկ մասիկ անոնցմե առնուլ, թուփե թուփ թոչտելով, եւ հավաքածներես շատը՝ քամիին եւ պիծակներուն դեմ պատահելով, կորսնցուցեր եմ. ահա ինչ որ մնացած էր բերանս, կը ձոնեմ ազգիս բանասիրաց»¹:

Սրվանձտյանցի կատարած վիթխարի աշխատանքը եւ սկիզբ դրված հավաքչական համակարգված գործունեությունը ոգեշնչման աղբյուր հանդիսացան, եւ մի այնպիսի աննախադեպ շարժում սկսվեց, որ նույնատիպ աշխատանքների ուղղորդեց նաեւ բազում հայորդիներին: Նրա այդ ազգանվեր **գործը** ժամանակին բարձր գնահատեցին հայ հոգեւորական եւ մշակութային անվանի գործիչները՝ Խրիմյան Հայրիկը, Աղթամարի պատրիարքարանից՝ Ներսես արքեպիսկոպոսը, Սանկտ Պետերբուրգից՝ Գաբրիել Պատկանյանը, Սուրբ Ղազարից՝ Ղևոնդ Ալիշանը, Թիֆլիսից՝ Րաֆֆին, հետագայում նաեւ Թումանյանը եւ այլք:

Գարեգին Սրվանձտյանցի աշխատանքների պտուղները մեր ժողովրդի համար նույն դերն են կատարել, ինչ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» եւ Խաչատուր Աբովյանի գրական-մանկավարժական գործունեությունը: Պատմահոր պես Աբովյանն ու Սրվանձտյանցը եւս համոզված էին, որ «Թեպետ մենք փոքր ածու ենք... բայց եւ այնպես մեր երկրում էլ գրելու եւ հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել...»², ուստի մենք էլ իրավուք ունենք մեր ստեղծածով հպարտանալու եւ բաց ճակատով ներկայանալու աշխարհին:

Շնորհիվ Սրվանձտյանցի՝ տարիների գործադրած ջանքերի՝ 1873-ին հայտնաբերած եւ հաջորդ տարի հրատարակած «Սասնա ծռեր» դյուցազնավեպի առաջին պատումը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ»

¹ Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, , Երևան, 1978, էջ 30:

² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 70:

վերնագրով, հայոց ինքնության անժխտելի ապացույցը դարձավ եւ իր գործի հետեւորդների համար ուղեցույց՝ պրպտելու, հիշողության մութ ծալքերից վեր հանելու եւ մեկ հարյուրամյակի ընթացքում Հայաստան աշխարհի տարբեր անկյուններից գրառելու եւս 150 պատում:

Ընդ որում, դարերի միջով անցած մեր էպոսը այն բացառիկ ժողովրդական ստեղծագործություններից մեկն է, որը աշխարհին է ներկայանում ոչ թե հեղինակային՝ գրական մշակման ճանապարհով, ինչպես հունական, պարսկական, ֆրանսիական, գերմանական եւ շատ ու շատ ժողովուրդների դյուցազնավեպերը, այլ անմիջապես ասացողներից կատարած գրառումներով, այն էլ ոչ թե մեկ կամ մի քանի, այլ մեծաքանակ՝ շուրջ 150 տարբերակներով:

Սրվանձտյանական այդ եւ բազմաթիվ այլ ձեռնարկումներ մեզ հնարավորություն տվեցին քաղաքակիրթ մյուս ժողովուրդների ստեղծածների շարքում մերը տեսնել ու մերով հպարտանալ:

Գարեգին Սրվանձտյանցը նաեւ իր իսկ գրառած նյութերից շատերի մեկնաբանողն ու վերլուծաբանն է, ուրեմն նաեւ՝ մեր առաջին ժողովրդագետն ու բանագետը: Նրա գրանցած բանահյուսական նյութերից շատերը՝ մանկական բանահյուսությունը, ժողովրդական երգերը, ավանդագրույցները, իմաստախոսությունները, հեքիաթներն ու հատկապես «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումը անմիջապես տեղ գտան դպրոցական դասագրքերում՝ դառնալով հայ երեխաներին ազգային ոգի ներշնչող, հայեցի դաստիարակությանը խթանող ստեղծագործություններ:

Շուրջ մեկ ու կես դար է՝ գիտության ու կրթության վերլուծաբանները եւ հոգետը դասի ներկայացուցիչները անդրադարձել ու շարունակում են անդրադառնալ Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանցի գործունեությանը, արժեւորվել են ժողովրդագիտության մեծ երախտավորի ազգագրական ու բանահյուսական նյութերի հավաքչական աշխատանքները, ըստ գրանցած նյութերի՝ մեկ առ մեկ ներկայացվել տարատեսակ բնագավառներում ու ժանրերում նրա ներդրումն ու դրանց մեկնաբանությունները, նա արժանացել է հայոց ազգային էպոսի առաջին գրառողը եւ մեկնաբանողը լինելու անգնահատելի փառքին: Սակայն հայ ժողովրդական երգիծական մանրապատումների սրվանձտյանական գրառումներին ու դրանց վերաբերյալ արտահայտած նրա տեսակետներին առ այսօր անդրադարձ չի եղել:

Ի դեպ, բանահյուսության այս տեսակի գրառումները չեն ընդգրկվել ոչ ժԹ. դարի երկրորդ կեսին տպագրված Գարեգին Սրվանձտյանցի

գրքերում, ոչ էլ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից 1978 եւ 1982 թվականներին հրատարակած երկհատորյակում:

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում պահպանվող սրվանձտյանական ձեռագրերում առկա տարատեսակ երգիծական մանրապատումներն ու զանազան հրատարակություններում դրանց մասին արված թոռուցիկ անդրադարձները ցույց են տալիս, որ Սրվանձտյանցի հավաքչական գործունեությունը, ի տարբերություն մի շարք բանահավաքների, չի սահմանափակվում այս կամ այն ժանրի շրջանակներում, նյութը գրանցելիս ժողովրդական բանարվեստի նմուշները երբեք չեն առանձնացվել ըստ ճաշակի ու ըստ հայեցողության: Այն ընդգրկում է վիպական ու քնարական ժանրի գրեթե բոլոր տեսակները: Չնայած ժամանակի սղությանն ու անելիքի անսահմանությանը՝ նա հայոց դյուցազնավեպի՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումի եւ վիպական ու քնարական բանահյուսության անգնահատելի նմուշների հետ ոչ միայն գրի է առել ժողովրդի մեջ մեծ տարածում գտած (եւ գուցե այդ ժամանակ շատերի ընկալմամբ գրառման համար անարժեք համարվող) երգիծական մանրապատումները, այլեւ անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ որոշակի դիտարկումներ է արել: Իր գործունեությամբ ազգագրական եւ բանահյուսական արժեքների հավաքչական աշխատանքներին մեծ թափ հաղորդած Սրվանձտյանցը լավ էր գիտակցում, որ մեր հոգեւոր մշակույթի ամեն մի դրսևորում, ժողովրդական բանարվեստի յուրաքանչյուր ստեղծագործություն, անկախ բնագավառից, ժանրից ու ծավալից, իր մեջ դարերի խորքից եկող մեր բառ ու բանի յուրօրինակ համն ու հոտն է պահպանում, իսկ դրանց հայտնաբերումը, գրառումը եւ գալիք սերունդներին ի պահ տալը բոլոր նվիրյալների սրբազան պարտքը պետք է դառնա³:

«Մանանա» ժողովածուի «Հանելուկներ, առակներ եւ նորելուկներ» բաժնում (հիշենք՝ «Մանանան» տպագրվել է 1876 թվականին) Սրվանձտյանցը անդրադառնում է հանելուկներին ու առակներին⁴ որպես «ժողովրդյան զվարճությանց եւ սրամտությանց» միջոց, հավաս-

³ Շուրջ կես դար անց անեկդոտ-զվարճապատումի պատմաճանաչողական դերը այսպես է արժևորել գրող Վահան Թոթովենցը. «Պետք է գրի առնել ու ապագա սերունդների համար պահել անեկդոտները: Ո՛չ մի վեպ, ո՛չ մի պատմվածք չեն պահի ժամանակի ինչ-ինչ կողմերն այնպիսի սրությամբ, ինչպես անեկդոտը», տես «Կատակում են մովսեսցիները», Երևան, 2012, էջ 86:

⁴ Ի դեպ, Պատմական Հայաստանի մի շարք վայրերում ժողովուրդը ինչպես առած-ասացվածքներին ու բուն առակներին, այնպես էլ զվարճապատումներին առակ է անվանում, իսկ ասացողներին՝ առակախոս:

տում, որ «հայերն ալ իրենց համար Եզոպոսներ եւ Լաֆոնթեններ ունեցեր են»⁵ վկայակոչելով հայության շրջանում առակախոսության եւ իմաստախոսության հայագգի Խիկարին, «ինչպես իրավամբ դիտած եւ ընդարձակ գրած է գիտնական գեր. Գաբրիել ս. արքեպիսկոպոս Այվազովսքին *Հազար եւ մի առածներու* հառաջաբանության մեջ»⁶: Գարեգին Սրվանձտյանցը անվիճելի է համարում հայության մեջ շրջանառվող առածների, առակների եւ հանելուկների հայկականությունը. «...եւ այն ամեն հայտնի է, որ հայոց գյուտ եւ հեղինակություն են, վասնզի հայոց կյանքի հանգամանքներով շինված են»⁷ չբացատրելով նաեւ դրացի ժողովուրդներից կրած ազդեցությունը. «Հազիվ ուրեք Պարսկաստանի խառնուրդ եւ տիպ կը ցուցնեն, բայց եւ այն բնական է, իբրեւ դրացի ազգի»⁸:

Այնուհետեւ նա, խոսելով զանազան հանդեսներում եւ պարբերականներում տպագրված առածների, հանելուկների եւ առակների, նաեւ իր հավաքած նմանատիպ նյութերի, մասնավորապես առակների մասին, գրում է. «Թեպետ տակավին շատ բան կը հավաքվի, եւ ես մաս մը ունիմ, հանդերձ կաճեցոյի ծներու (պակասամտաց) վրա շինված առասպելներով»⁹:

Ինչպես տեսնում ենք, Գարեգին Սրվանձտյանցը այստեղ կոնկրետացնում է իր գրառած *առակների* մի մասի տեղավայրը՝ Կաճեթը (գյուղ՝ Արեւմտյան Հայաստանի Վանի վիլայեթի Շատալսի գավառում) եւ փակագծում տալիս կաճեթյան պոլեմիկական առակ-զվարճապատումների հերոսներին բնորոշող ժողովրդական *ծոներ* անվանման բացատրությունը՝ *պակասամտաց* :

Կարող ենք վստահությամբ հավաստել, որ բանահավաք-բանագետ տը փակագծում *ծոների* կապակցությամբ *պակասամտաց* բացատրությունը տալիս է՝ ընթերցողի մեջ կանխելու համար շփոթությունը մեր դյուցազնավեպի՝ «Սասնա ծռերի» հերոսների դրսևորած ծոթություններից:

Մեր ձեռքի տակ եղած նյութերի մեջ ոչ բոլոր երգիծական մանրապատումներն են *պակասամտաց* թեմայով: Սրվանձտյանցի գրառումներում տեղ են գտել նաեւ ծուլությունը («Ծուլուն պատիժ»), գինեմոլությունն ու պարծենկոտությունը («Յուր պատիվ զճանչողն կխրատվի»),

⁵ Գարեգին Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 274:

⁶ Անդ:

⁷ Անդ:

⁸ Անդ:

⁹ Անդ:

բամբատակ՝ անբարոյական պահվածքն («Ժամկոչի կին, ռես, երեցփոխան եւ գզիր») ու գողությունը (անվերնագիր) եւ այլ երեսութներ ներկայացնող ու քննադատող երգիծապատումներ:

Գարեգին Սրվանձտյանցի՝ շատախ-կանեթյան շարքի գրառումներն առանձնանում են իրենց լակոնիկությամբ, թեմայի հակիրճ գրանցումներով: Ձեռագրերի որոշ բառեր ջնջումներով ու ուղղումներով են արված, երբեմն էլ գրեթե անընթեռնելի են: Ինչպես երեսում է գրանցած նյութի տեսքից, դրանց գերակշռող մասը, այսպես ասած, ծնկան վրա արված գրառումներ են, շատ են գրավոր խոսքի գրանցման ժամանակ օգտագործվող հեղինակային համառոտագրությունները, ինչը, բնականաբար, բխում էր ժամանակ շահելու եւ ասելիքը հապշտապ թղթին հանձնելու ցանկությունից: Նյութերի մեծ մասն ունի վերնագիր, որոնք հիմնականում բանահավաքինն են: Իբրեւ կրոնական գործիչ՝ նա նաեւ մանրապատումների վերնագրերով է իր վերաբերմունքն արտահայտել հասարակության մեջ տեղ գտած նմանատիպ բացասական դրսևորումների հանդեպ:

Ինչ խոսք, Գարեգին Սրվանձտյանցի գրառումներից շատերի տարբերակներին հետագայում հանդիպում ենք նաեւ այլոց գրառումներում: Այսպես օրինակ, «Զուարճալիք. ծիծաղաշարժ ձեռնարկում» բաժնի նյութերից մեկը՝ «Ամբողջ գիւղի մը իմին տուած»¹⁰ զվարճապատումը, կանեւցիների՝ կաղամբի թթու դնելու մասին է. «Կանեւցիք կաղամբի թթու բռնելուն համար խնայելով աղն, խորհեցան, որ Ախթամարայ ծովուն մէջ, որուն ջուրն սաստիկ աղի է, բռնել թթուն: Եւ բոլոր գիւղի կաղամբներ մանրելով՝ ծովը լեցուցին»:

Այս պատումի տարբերակներից մեկին՝ «Թթուն պովե (բռնել է, թթվել է)» վերնագրով, հանդիպում ենք «Ծիծաղում են վանեցիները» գրքում¹¹: Այստեղ կանեւցիք շաղգամի թթու են դնում իրենց գյուղի լճում գյուղում, մնացած գործողությունները եւ վերջաբանը երկու պատումներում էլ գրեթե նույնն են: Հետաքրքիրն այս տարբերակում տեղացիների անհեթեթ գործողության «հավաստի» լինելու վկայությունն է. «Թթուն պովե», հեզնական ասույթ է, որ ուղղվում էր կանեւցիներին, նրանց ծաղրի ենթարկելու համար: Մինչեւ Վասպուրականի 1915-ի գաղթը այդ լիճը կոչվում էր «Թթվի գյուղ», այսինքն՝ թթվի լիճ»:¹²

¹⁰ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թ. 4/13, էջ 0269:

¹¹ «Ծիծաղում են վանեցիները», Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Երևան, 2006, էջ 152:

¹² Տե՛ս անդ, էջ 152:

Եթե Սրվանձտյանցի գրանցած՝ *ձեռքը կճուճի մեջ մնալուն առնչվող* պատումների տարբերակներ են գրառվել նաև այլ տարածաշրջաններից՝ Վան¹³, Մոկս¹⁴, Լոռի¹⁵, Փերիա¹⁶ եւ այլն, ապա *ամեն անգամ փայր կրկնու հոգսից ազատվելու համար անըստը փառելու* մասին պատմող զվարճապատումի այլ տարբերակ առայժմ մեզ չի հանդիպել:

Ըստ Սրվանձտյանի գրառման՝ այս պատումի հերոսները գավառի կենտրոնի բնակիչներն են՝ շատախցիները. «Շատախցիք անտառեն ամեն ժամանակը փայտ բերել են ձանձրացել էին, ուստի բոլոր գյուղացի մի անգամ խորհրդով անտառ վառեցին, որ իրենց աշխարհն մեկ անգամվամբ ավարտելով՝ այլևս չկարոտեն փայտ բերելուն»:¹⁷

Հայ ժողովրդական բանարվեստում միեւնույն մոտիվը՝ թեման, մենք տեսնում ենք տարբեր անուններով հանդես եկող կերպարների գործողություններում: Նման երևույթի հանդիպում ենք նաև հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում եւ զվարճախոսություններում. Պըլը Պուղու գործողությունները Նասրեղինին կամ Ռուբենին վերագրվող պատումներում ենք հանդիպում, կամ էլ Պոլոզ Մուկուչին ու Վարդանիկին վերագրվողները՝ այլ զվարճախոսների կերպարանքով հանդես եկող ստեղծագործություններում:

*«Կապն անունի եւ մուրիվի միջեւ շարք թույլ է. անունները հաճախ փոխվում են, մուրիվներն ավելի կայուն են»*¹⁸, - գրում է Մանուկ Աբեղյանը ժողովրդական գրույցների՝ ժողովրդական առասպելախառն պատումների վերաբերյալ:

Նման երևույթը կատարվում է ոչ միայն անունների հետ: Միեւնույն թեման կարող է շրջանառվել նաև տարբեր տարածաշրջաններում: Այսպես օրինակ, Սրվանձտյանցի մատնանշած «պակասատության» տարատեսակ դրսևորումները միայն շատախ-կաճեթյան տարածաշրջանի ժողովրդի բանարվեստին չի հատուկ: Նմանատիպ երևույթներն առկա են թե՛ դարաբաղցիների հաթերքյան (Արցախ, Հաթերք) պատումնաշարում¹⁹ ու լոռեցիների (հիմնականում հորոսյան

¹³ Գեղամ Թարվերդյան, ՀԱԻ-ի արխիվ, ֆ. 1, էջ 4469:

¹⁴ Иосиф Орбели, том 2. Ереван, Избранные труды, 2002, էջ 59:

¹⁵ Հորոս, Ժողովրդական առակներ, հավաքեց Ե. Լալայեան, Թիֆլիս, Տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1903, էջ 15-16:

¹⁶ Ներսէս Ծ. Վրդ. Բախտիկեան, Փերիոյ խելացին (զուարճալի մանրադէպեր), Պէյրութ, 1967, էջ 20:

¹⁷ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թիվ 4/13, էջ 0269:

¹⁸ Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Ա., Երևան, 1966, էջ 298:

¹⁹ Նմուշներ Լեոնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, Երևան, 1978, էջ 99-101:

շարքի) «շաշություններում»²⁰, թե՛ շեփիկցիների²¹ (Ալևի մոտ է գտնվում), մարաշցիների²², մոկացիների²³, գեյթունցիների²⁴ եւ այլոց բանավոր մշակույթում: Ի դեպ, Հովսեփ Օրբելու կողմից 1911-12թթ. Մոկսում կատարած գրառումներում բավականին մեծ քանակ են կազմում «պակասամտաց» թեմայով պատումները:

Այս կարգի երգիծապատումները, ինչպես վերը ասվեց, Սրվանձտյանցն անվանում է *առասպելներ*, այսինքն՝ սուտ պատմություններ: *Պակասամտաց* պատումներից մեկի՝ «Անխելքի դաս»-ի կողքին բանահավաքը նույնիսկ նշել է՝ *սուրբ*:²⁵

Դեռեւս Ե. դարում «Հայոց պատմության» մեջ Մովսես Խորենացին էր նմանատիպ հորինվածքներն *առասպել* անվանում, այսինքն՝ սուտ կամ ստերի սուտ: Քերթողահայրն արհամարհանքով եւ հակալրանքով է խոսում պարսից առասպելների մասին, եւ դիմելով Սահակ Բագրատունուն՝ գրում է. «Իսկ ի՞նչ կարիք ունես այս սուտ *առասպելների* կամ ինչի՞ են պետք այսպիսի շինծու, անմիտ եւ անիմաստ գրույցները»²⁶: Չնայած, ըստ Պատմահոր, հույների առասպելները «պերճ ու ողորկ» են եւ «այլաբանորեն իրենց մեջ թաքցնում են ճշմարիտ իրողություններ»²⁷: Նույն կերպ Հայկի թոռ Պասքամից սերված Անգեղյա Տորքին, նրա վիթխարի հասակն ու դեմքի տգեղությունը ներկայացնելով եւ դիմելով Բագրատունուն՝ Խորենացին գրում է. «Բայց եթե ուզում ես, ես էլ նրա մասին անհամ ու անտեղի ստեր կպատմեմ, ինչպես պարսիկները»... ու պատմում է ժայռեր պոկելու եւ նավերի հետեւից շարտելու, որձաքար ապառաժները ճեղքելու, եղունգներով տաշելու, հղկելու, տախտակներ ձեւելու եւ արծիվներ եւ այլ բաներ գծելու մասին, - ապա ավելացնում է. «Ո՛հ, չափազանց առասպել է այս, առասպելաց առասպել»²⁸ (իմա՝ ստերի սուտ): Բայց, ի տարբերություն պարսկականի, հույների առասպելների պես սրանք էլ է նա համարում ժողովրդի

²⁰ ՀԱԲ, Լոռի, հ. 20, էջ 143:

²¹ Սարգիս Բախտիկեան, Շեփիկայ խելացին (հայկական գուարճախոսություններ), Պէրյուր, Լիբանան, 1953, էջ 28-30:

²² Մարաշ, Երկասիրեց Գր.Հ. Գալուստեան, Նիւ Եորք, 1934, էջ 406:

²³ Иосиф Орбели, նշվ. աշխ., էջ 58:

²⁴ Միջ-գաւառական անեքթոններ, Հաւաքեց եւ ներկայացուց Յ. Չոլաքեան, Հալեպ, 1988, էջ 60:

²⁵ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, 4/13, էջ 0069:

²⁶ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 123:

²⁷ Անդ:

²⁸ Անդ, էջ 138-139:

կողմից ճշմարտության հենքի վրա ստեղծված գրույցներ. «Բայց, ինչ անես, որ մարդը սաստիկ ուժեղ էր եւ այսպիսի գրույցների արժանի»²⁹:

Խաչատուր Աբովյանը եւս «Պարապ վախտի խաղալիք»-ում ժողովրդական երգիծապատումներն անվանում է մերթ *«Ասացվածք ընահայր ինքնահարմար հորինվածք»*³⁰ (Լոռեցիք՝ 4 նմուշ, Միլլա Մասրադնի 4 պատում եւ 7 առակ), մերթ *ասացվածք*³¹ (5 նմուշ): Երբեմն էլ ներկայացվող չափածո 10 առակներն անվանում է *ստասպեղք*³² (ընդգծելու համար նրանց սուտ լինելը կամ էլ ասելիքի այլաբանություն մատուցումը): Իսկ «Զվարճալի ու կարճ պատմությունք»³³ գրքում (դրանք 71 «հայոց եւ այլոց» երգիծապատումներ են) նա նշում է նաեւ *սրամիտք ստածք* կամ *մնասպեղք* եզրույթները³⁴:

Նշենք, որ ԺԱ.-ԺԲ. դարերում «ստասպեղ» նշանակել է նաեւ առակ, իսկ «ստասպեղախաւք»՝ առակախոս: Առակագրությանը նվիրված ուսումնասիրության մեջ Մանուկ Աբեղյանը գրում է. «Հայերեն *ստասպեղ* բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաեւ իբրեւ առակ... հնում հալածված են եղել ինչպես գուսանները եւ ուրիշները, այնպես եւ ստասպեղախոսները, այսինքն՝ առակախոսները»³⁵:

Իր գրառած առակ-գվարճապատումների տեղադրումը «Մանանա» ժողովածուում ծավալի պատճառով Սրվանձոյանցը անհնար է համարում. «Բայց տեսնելով, որ բավական ստվար եղավ Մանանաս, կպահեմ այլ պատեհության»³⁶, – գրում է նա: Ինչպես երևում է մեջբերվող խոսքի շարունակության մեջ, այդ «առասպելներից» մի փունջ բանահավաքը հանձնած է եղել մշակության զործիչ Մանվել Անանյանին. «Եւ որոցմե գումար մը՝ ի ձեռին ուներ մեր հայրենակից ուսումնական պ. Մ. Անանյանն, որ այժմ Ս. Պ. Բուրգ կը գտնվի եւ կ'ուզեր հրատարակել՝ հանդերձ իմաստասիրական տեսությամբ մը»³⁷: Հիշյալ պարոնն «աշխատակցել է ժամանակի պարբերական մամուլին՝ ազգագրական-բանահյուսական, հայրենագիտական նյութեր տրամադրելով»³⁸:

²⁹ Անդ, էջ 139:

³⁰ Խաչատուր Աբովյան, Երկեր, Երևան, 1984, էջ 295:

³¹ Տեն անդ, էջ 337:

³² Տեն անդ, էջ 357:

³³ Տեն անդ, էջ 383-414:

³⁴ Տեն անդ, էջ 403-414:

³⁵ Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ., Երևան, 1970, էջ 184:

³⁶ Գարեգին Սրվանձոյանց, նշվ. աշխ., էջ 274:

³⁷ Անդ, էջ 274:

³⁸ Անդ, էջ 627:

Թե տպագրության հանձնած այդ նյութերի ճակատագիրն ինչ է եղել, հրատարակվել են, թե ոչ, մեզ հայտնի չէ: Դրանց ի հայտ գալը, ինչ խոսք, էլ ավելի կամրոջացնելու բանահավաք-բանագետ Սրվանձտյանցի գրառումների եւ նյութի վերաբերյալ դիտարկումների շրջանակները՝ դրանց վերաբերյալ արված տեսական խորհրդածությունները, քանզի նյութը հանձնվել էր «հանդերձ իմաստասիրական տեսությամբ մը»:

Սրվանձտյանցի անտիպ ձեռագրերում հանդիպում ենք ժողովրդական երգիծապատումներին տրվող մեկ այլ անվանման՝ *գոսարճալիք*, որին հետևում է նշումը՝ *ծիծաղաշարժ ձեռնարկում*³⁹: Դրանք շատախցիների, կանեթցիների եւ այլ վայրերի մարդկանց մասին տասը կարճառոտ պոեմով զվարճապատումներ են:

Գ. Սրվանձտյանցի ֆոնդի ձեռագրերի մեկ այլ տետրի կազմի վրա գրված է՝ *Գարեգին Ծ. Վրդ. (Վան)*, 1881, *մայիս*, այնուհետև բերվում են գրառած նյութերի տեսակները՝ *գովք, առակ, բանբառակ, առասպել, վեպ*⁴⁰:

Այստեղ Սրվանձտյանցը որոշ նյութերի «սույր կամ սրերի սույր» լինելը ընդգծելու համար կրկին մատնանշում է *առասպել* (իբրեւ հորինվածքներ) եզրույթը: Բացի մի քանի երգիծական առակներից՝ «*Լվեր դարի կերթան*», «*Սրջյուն եւ մարդ*», ֆոնդի ձեռագրի էջերում տեղ են գտել նաև որոշ զվարճապատումներ, սակայն ոչ շատախ-կանեթյան «պակասամտաց» թեմաներով: Դրանք մի փոքր ծավալուն պոեմով ժողովրդական երգիծական մանրապատումներ են, որոնցից մեկը վերնագրված է «Տերտեր եւ պառավ»⁴¹:

Պառավի տղան իր վարձու աշխատանքի վճարը տերտերից կարողանում է կորզել նրա գլխին խաղ խաղալուց հետո միայն. նա նախօրոք եկեղեցում թաքնվում է, եւ տերտերի՝ աղոթք կարդալու ամեն մի «Տեր, ողորմյա՛, Տեր, ողորմյա՛»-ին հետևում է տղայի՝ «Չեմ ողորմա, չեմ ողորմա» արձագանքը՝ սարսափեցնելով եւ պարտադրելով նրան՝ վարձը վճարել: Այս պատումի տարբերակներից մեկը հայտնի է նաև «Տեր ողորմյա, չեմ *ողորմա*»⁴² վերնագրով, սակայն, ի տարբերություն վերջինիս, սրվանձտյանական երգիծապատումը հրաշալի չափածոյախառն կառուցվածք ունի: Այս շարքի պատումներից մեկը՝ «Կիրակոս

³⁹ ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, թ. 4, էջ 0269-0272:

⁴⁰ ՏՆԱ անդ, թ. 1, էջ 0063-0083:

⁴¹ ՏՆԱ անդ, էջ 0073:

⁴² ՏՆԱ «*Ծիծաղում են վանեցիները*», նշվ. աշխ., էջ 148:

ի Պոլիս»⁴³, առնչվում է պանդխտության թեմային, կան նաև անվեր-
նագիր նյութեր, ինչպես՝ «Կեղնի-չեղնի մարտ մը ու կնիկ մը կեղնի»⁴⁴
սկսվածքովը, եւ այլն: Մանրապատումներից մեկն էլ վերնագրված է
«Ժամկոչի կին, ռես, երեցփոխան եւ գզիր»⁴⁵: Գյուղի ռեսը, երեցփոխա-
նը եւ գզիրը սիրահարվում են ժամկոչի կնոջը, վերջինս բոլորին տար-
բեր ժամերի ժամադրում է իր տանը: Նախօրոք նա ամուսնուն ջաղաց
է ուղարկում եւ մի խոր հոր է փորել տալիս ու բոլորին ծուղակը գցում:
Միգուցե նմանատիպ թեմաների համար է Սրվանձոյանցը վերը նշել
նաև *բամբատակ* եզրույթը:

Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարա-
նում պահպանվող Գ. Սրվանձոյանցի ֆոնդի տարբեր տետրերում եւս
այլ նյութերի հետ տեղ են գտել որոշ երգիծական մանրապատումներ,
որոնց մասին առանձին-առանձին անդրադառնալու անհրաժեշտու-
թյունն այս հոդվածի շրջանակներից դուրս է:

Այսպիսով՝ մեր ձեռքի տակ եղած հայ ժողովրդական երգիծական
մանրապատումների սրվանձոյանական անտիպ գրառումներն ու
դրանց մեկնաբանությունները ցույց են տալիս, որ ժողովրդագիտու-
թյան անխոնջ մշակը անտարբեր չի եղել ժողովրդական երգիծանքի
նմանատիպ դրսևորումների հանդեպ: Ավելին, հարկ եղած դեպքում
նա գիտական վերլուծություններ է կատարում, ընդգծում դրանց տե-
սակային բնորոշ հատկանիշները՝ որոշ խմբի մանրապատումների հա-
մար շեշտելով նաև նրանց տեղավայրային եւ բովանդակային առանձ-
նահատկությունները:

Գարեգին Սրվանձոյանցի մանկավարժական, ժողովրդագիտա-
կան եւ հավաքչական աշխատանքների ողջ գործընթացը, ինչպես նաև
հոգևոր գործունեությունն ուղղված են եղել մի նպատակի՝ հայոց պե-
տականության վերականգնումը, որին հասնելու համար անհրաժեշտ
էր առաջին հերթին հայ ժողովրդի ազգային ոգին բարձրացնել միայն
ու միայն հայեցի դաստիարակությամբ, մայրենի լեզուն ու հավատը
ամուր պահելով: Իսկ այդ սուրբ նպատակի իրագործմանը կարող էին
նպաստել հարյուրամյակների թոհորոհով անցած մեր հոգևոր մշա-
կութային արժեքները, որոնց թվում նաև՝ ազգի կենսասիրությունն ու
ոգին արթուն պահող երգիծական մանրապատումները:

⁴³Տե՛ս ԳԱԹ, Գ. Սրվանձոյանցի ֆոնդ 1, թ. 1, էջ 0069:

⁴⁴Անդ, էջ 0079:

⁴⁵Անդ, էջ 0075:

РЕЗИОМЕ

Весь процесс педагогической, народоведческой и собирательской деятельности Архиепископа Гарегина Сrvандзтянца, как и его духовная деятельность были направлены к единой цели - восстановление армянской государственности, для достижения которой в первую очередь было необходимо поднятие национального духа армянского народа только и только через образование армянофильского характера, упорное сохранение родного языка и вероучения. И реализации этой святой цели могли послужить наши духовные и культурные ценности, прошедшие сквозь вековые испытания, в числе их – также юмористические миниатюры, постоянно подпитывающие жизнелюбие народа.

SUMMARY

The unpublished records of Armenian folk humoresques by Archbishop Karekin Srvandztyants and their interpretations reveal that the assiduous researcher of the Armenian folk culture was not indifferent towards such manifestations of the folk's humour. Moreover, in many cases he scientifically analyzed them, discovered their typical peculiarities, underlining also local and contextual traits for humorous miniatures of certain groups.

The whole process of Karekin Srvandztyans' folk studies, of his pedagogical and gathering activities as well as his spiritual work were aimed at a single goal - reconstruction of the Armenian state. To achieve that goal it was first of all necessary to elevate the national spirit of the Armenians through purely Armenian forms of education, steady preservation of the native language and faith and creed. And our spiritual and cultural values, which survived through centuries of challenge, and among them – humoresques sustainably feeding the vitality of the folk, could serve to the realization of such a holy aspire.

